

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1. Ձրադվածություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2000Ա. հունվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1476.1 հազ. մարդ, որոնց 88.1%-ը կամ 1300.7 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 11.9 %-ը կամ 175.4 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) կայուն կերպով չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 38.5%-ի կամ 500.3 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9 հազար տնտեսավարող սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2000թ. հունվարին նշված տնտեսավարող սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 3.5%-ով: Տնտեսավարող այս սուբյեկտներում զբաղված բնակչության 42.3%-ը զբաղված է սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցապ, կրթություն, մշակույթ, արվեստ) 28.7%-ը՝ արդյունաբերության մեջ, 6.8%-ը՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.6 %-ը՝ շինարարության մեջ, 3.4%-ը՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 5.6%-ը կառավարման համակարգում, և 8.6%-ը՝ այլ ճյուղերում:

2000թ. հունվարի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման են կանգնել 203.1 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1%-ը կամ 201.2 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 87.4 %-ը կամ 175.8 հազ. մարդ:

2000թ. հունվարին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 4.0 հազ. մարդ, որոնցից 3.5 հազարը կամ 87.5 %-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.2 հազ.մարդ, որոնցից՝ 20.2%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

**Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2000թ. հունվարին\***

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>203.1</b>	<b>131.5</b>	<b>175.8</b>	<b>127.6</b>
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	3.1	119.2	2.2	122.2
Արարատ	9.8	116.7	7.5	113.6
Արմավիր	15.5	156.6	12.5	148.8
Գեղարքունիք	12.2	131.2	8.9	123.6
Լոռի	28.6	124.9	25.9	121.6
Կոտայք	18.6	136.8	14.7	127.8
Շիրակ	35.4	118.8	32.1	114.2
Սյունիք	15.5	116.5	13.8	119.0
Վայոց Ձոր	2.4	109.1	2.0	105.3
Տավուշ	6.3	126.0	5.4	117.4
Երևան	55.7	148.5	50.8	146.0

*\*) ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով*

Գործազուրկ բնակչության 95.0 %-ը կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 28.9 %-ը՝ Երևան, 16.6 %-ը՝ Գյումրի և 8.8 %-ը՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.1%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում նախորդ տարվա հունվարի նկատմամբ նվազել է 4.6 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2000թ. հունվարին կազմել է 678 մարդ. այդ թվում՝ 73.9 %-ը կամ 501-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2000թ. հունվարին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 646 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 299 մարդ (աշխատանք փնտրող):

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2000թ. հունվարին կազմել է 27.2 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3136 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2000թ. հունվարին կազմել է 11.9%-ը և նախորդ ամսվա համեմատությամբ աճել է 0.3, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.4 տոկոսային կետով: